

**Նոր խմբագրությամբ գրանցված է**

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Զավադյան

«\_\_\_» \_\_\_\_\_ 2011թ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Օտարերկրյա անվանատիրոջ  
սպասարկման  
կանոններ  
(նոր խմբագրությամբ)

## Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

### Հոդված 1. Ընդհանուր դրույթներ և հասկացություններ

1. Սույն կանոնները սահմանում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Դեպոզիտարիա) և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված օտարերկրյա պահառուների միջև փոխհարաբերությունների ձևավորման, ծառայությունների մատուցման կարգը և պայմանները:
2. Սույն կանոններում կիրառվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.
  - 2.1. «**օտարերկրյա անվանատեր**». օտարերկրյա անձ, որն իր երկրի օրենսդրության համաձայն իրավասու է իր անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ ունենալ:
  - 2.2. «**օտարերկրյա անձ**». անձ, որն ըստ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հանդիսանում է ոչ ռեզիդենտ անձ:
  - 2.3. «**արժեթուղթ**». այն արժեթղթերը, որոնց սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարումն իրականացվում է ՀՀ տարածքում գործող մասնագիտացված ռեեստրավարի կողմից:
  - 2.4. «**իրավասու էլեկտրոնային հասցե**». Օտարերկրյա անվանատիրոջ և Դեպոզիտարիայի հետ կնքված «Անվանատիրոջ հաշվի բացման և վարման պայմանագիր»-ում (այսուհետ՝ Պայմանագիր) ներառված համապատասխան հասցե գրանցված համաշխարհային միջբանկային ֆինանսական հեռահաղորդակցության կազմակերպության (SWIFT) համակարգչային ցանցում (այսուհետ՝ Իրավասու ցանց):
  - 2.5. «**Հանձնարարական**» կամ «**Հարցում**». Դեպոզիտարիայում բացված անվանատիրոջ հաշվով գործառնություններ կատարելու կամ տեղեկություններ տրամադրելու նպատակով տրված Իրավասու ցանցի ՀՏ 999 հաղորդագրությունը կամ դրա թղթային տարբերակը լրացված սույն կանոններով սահմանված կարգով.
  - 2.6. «**Հաճախորդ**». ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով օտարերկրյա անվանատիրոջ հետ կնքել է արժեթղթերի պահառության պայմանագիր.
3. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և Դեպոզիտարիայի այլ կանոններով սահմանված նշանակությունները:
4. Սույն կանոններով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարման անհրաժեշտությունը, չափը և կարգը սահմանվում են Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ով:

## **Գլուխ 2. Անվանատիրոջ հաշվի բացումը**

### **Հոդված 2. Դեպոզիտարիայի հետ պայմանագրի կնքումը և անվանատիրոջ հաշվի բացումը**

1. Դեպոզիտարիայում որպես օտարերկրյա անվանատեր հաշվառվելու և սպասարկվելու նպատակով օտարերկրյա անվանատերը Դեպոզիտարիայի հետ կնքում է Պայմանագիր, որից հետո օտարերկրյա անվանատիրոջ կողմից ներկայացված սույն հոդվածի 5. կետով սահմանված հանձնարարականի հիման վրա Դեպոզիտարիան բացում է անվանատիրոջ անձնական հաշիվ:
2. Պայմանագրի կնքման համար օտարերկրյա անվանատերը Դեպոզիտարիա է փոխանցում հետևյալ փաստաթղթերը.
  - 2.1. համապատասխան դիմում ուղղված Դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարին՝ Պայմանագրի կնքելու ցանկությամբ, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ վավերապայմանները՝ այդ թվում իրավասու էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում), բանկային վավերապայմանները:
  - 2.2. Օտարերկրյա անվանատիրոջ՝ իր երկրի պետական մարմնի կողմից տրված թույլտվության կամ լիցենզիայի պատճենը, որի համաձայն օտարերկրյա անվանատերն իրավունք ունի իր անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ վարել,
  - 2.3. Օտարերկրյա անվանատիրոջ պետական գրանցման վկայականի պատճենը,
  - 2.4. Օտարերկրյա անվանատիրոջ գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնի նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը,
  - 2.5. Օտարերկրյա անվանատիրոջ լիազորված անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթը, որն առնվազն ապահովում է լիազորված անձի նույնականացումը և հստակ նախատեսում է լիազորությունների շրջանակը:
3. Սույն հոդվածի 2. կետով սահմանված բոլոր փաստաթղթերը Դեպոզիտարիա են փոխանցվում հայերեն լեզվով, իսկ 2.2.-2.5. կետերով սահմանված փաստաթղթերը՝ նաև հաստատված ապոստիլի կողմից:
4. Պայմանագրի կնքման համար սույն հոդվածի 2. կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Դեպոզիտարիան Պայմանագիր է կնքում օտարերկրյա անվանատիրոջ հետ:
5. Դեպոզիտարիան օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներով հաշվառվող արժեթղթերի յուրաքանչյուր սեփականատիրոջ գծով տվյալ օտարերկրյա անվանատիրոջ համար բացում է անվանատիրոջ առանձին հաշիվ: Սույն կետով սահմանված արժեթղթերի հաշիվներ բացելու համար օտարերկրյա անվանատերը Դեպոզիտարիային տալիս է Հանձնարարական, որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկությունները.
  - 5.1. Օտարերկրյա անվանատիրոջ մասին.

- 5.1.1. լրիվ անվանումը (նաև անգլերեն լեզվով՝ առկայության դեպքում) և կազմակերպաիրավական տեսակը
  - 5.1.2. գտնվելու և փաստացի գործունեության վայրը
  - 5.1.3. հարկ վճարողի հաշվառման համարը կամ նույնականացման այլ համար տրված պետական մարմնի կողմից
  - 5.2. արժեթղթերի՝ ֆիզիկական անձ հանդիսացող սեփականատիրոջ դեպքում.
    - 5.2.1. անունը, ազգանունը,
    - 5.2.2. անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան, համարը,
    - 5.2.3. բնակության վայրը,
  - 5.3. արժեթղթերի՝ իրավաբանական անձ հանդիսացող սեփականատիրոջ դեպքում.
    - 5.3.1. լրիվ անվանումը,
    - 5.3.2. կազմակերպա-իրավական տեսակը,
    - 5.3.3. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ դրա բացակայության դեպքում պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը,
    - 5.3.4. գտնվելու և փաստացի գործունեության վայրը,
6. Սույն հոդվածի 5.1. կետով սահմանված օտարերկրյա անվանատիրոջ մասին տեղեկությունները ներկայացվում են միայն առաջին՝ օտարերկրյա անվանատիրոջ հաշվի բացման դեպքում: Երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ անվանատիրոջ հաշվի բացման դեպքում տվյալ օտարերկրյա անվանատիրոջ մասին տեղեկությունները չեն ներկայացվում: Օտարերկրյա անվանատիրոջ մասին սույն հոդվածի 5.1. կետով սահմանված տեղեկությունների փոփոխման դեպքում ներկայացվում են սույն կանոնների 3-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված Հանձնարարական:

### **Գլուխ 3. Փաստաթղթաշրջանառությունը**

#### **Հոդված 3. Հանձնարարականների և այլ փաստաթղթերի ներկայացման ձևը, կարգը և ժամկետները**

1. Դեպոզիտարիայի և օտարերկրյա անվանատիրոջ միջև փաստաթղթաշրջանառությունը կարող է իրականացվել երկու եղանակով՝ էլեկտրոնային կամ թղթային:
2. Էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է SWIFT համակարգի միջոցով: Իրավասու ցանցից ուղարկված փաստաթուղթը կամ Հանձնարարականը/Հարցումը վավեր է և հավասարազոր է թղթային փաստաթղթին, եթե այն ուղարկվել է ուղարկողի իրավասու էլեկտրոնային հասցեից ստացողի իրավասու էլեկտրոնային հասցեին:
3. Օտարերկրյա անվանատիրոջ կողմից թղթային եղանակով Դեպոզիտարիա փոխանցվող սույն կանոններով սահմանված հանձնարարականները, հարցումները, տեղեկությունները և այլ փաստաթղթերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) պետք է լինեն հայերեն լեզվով, իսկ օտարալեզու Փաստաթղթերը՝ թարգմանված հայերեն լեզվով և

հաստատված նոտարի կողմից: Ընդ որում Փաստաթղթերը պետք է կնքվեն օտարերկրյա անվանատիրոջ կնիքով և ստորագրված լինեն դրանք ստորագրելու համապատասխան լիազորություն ունեցող անձանց կողմից, որի լիազորությունների մասին պետք է հավաստիանա Դեպոզիտարիան: Սույն կետում նշված կնիքի բացակայության դեպքում Փաստաթղթերի ստորագրողի ստորագրությունը պետք է ներկայացվի նոտարի կողմից վավերացված:

4. Այն դեպքում, երբ Փաստաթղթերը լրացված կամ կազմված են հայերեն լեզվով, ապա դրանց նկատմամբ գործում են Դեպոզիտարիայի գործող կանոններով սահմանված Փաստաթղթերի ստորագրության և դրանց վավերացման նկատմամբ սահմանված դրույթները:
5. Օտարերկրյա անվանատիրոջ կողմից թղթային եղանակով Փաստաթղթերը սույն կանոններով սահմանված կարգով կազմված լինելու դեպքում կարող են Դեպոզիտարիա փոխանցվել նաև փոստային ծառայության կողմից:
6. Դեպոզիտարիայի կողմից սույն կանոններով սահմանված Փաստաթղթերը կազմվում և օտարերկրյա անվանատիրոջը ներկայացվում են հայերեն և անգլերեն լեզուներով, որի դեպքում գերակա է համարվում հայերեն լեզվով պատրաստված Փաստաթղթերը: Դեպոզիտարիայի կողմից թղթային եղանակով անգլերեն լեզվով ներկայացված Փաստաթղթերը կնքվում են Դեպոզիտարիայի կնիքով: Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Փաստաթղթերի ճշգրիտ թարգմանության համար:
7. Դեպոզիտարիայի կողմից թղթային եղանակով օտարերկրյա անվանատիրոջը Փաստաթղթերի փոխանցումը իրականացվում է օտարերկրյա անվանատիրոջ լիազորված ներկայացուցչին տրամադրելու միջոցով, որի լիազորությունների մասին պետք է հավաստիանա Դեպոզիտարիան: Փաստաթղթերը օտարերկրյա անվանատիրոջը կարող են փոխանցվել նաև փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով:

- 8.** Օտարերկրյա անվանատիրոջ և տվյալ հաշվում հաշվառվող արժեթղթերի սեփականատերերի մասին տեղեկությունների փոփոխության, ինչպես նաև տվյալ անվանատիրոջ հաշվում հաշվառվող արժեթղթերի նկատմամբ տիրապետման, օգտագործման կամ տնօրինման իրավունքը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկատվությունն իրեն հայտնի դառնալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրյա անվանատերը Դեպոզիտարիային տալիս է փոփոխված տեղեկությունները ներառող Հանձնարարական նշելով միայն կոնկրետ փոփոխությունները: Նշված ժամանակահատվածում սույն կետով սահմանված Հանձնարարականի ներկայացման անհնարինության դեպքում այն ներկայացվում է ողջամիտ կարծ ժամկետում: Հավատարմագրային կառավարման դեպքում օտարերկրյա անվանատերը սույն կետում նշված Հանձնարարականում ներկայացնում է նաև հավատարմագրային կառավարչի ինքնության վերաբերյալ տեղեկությունները՝ անվանումը, կազմակերպարավական տեսակը, գրանցման և փոստային հասցեները:
- 9.** Օտարերկրյա անվանատիրոջ կողմից սույն հոդվածի 8-րդ կետով սահմանված Հանձնարարականի հիման վրա Դեպոզիտարիան անվանատիրոջ հաշվում փոփոխությունները կատարում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 10.** Դեպոզիտարիան անվանատիրոջ հաշվում հաշվառվող արժեթղթերով գործառնություններ կատարելուց կամ մերժելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրյա անվանատիրոջը իրավասու ցանցի ՀՏ 999 հաղորդագրության կամ թղթային տեղեկանքի միջոցով է ներկայացնում է համապատասխան գործառնության գրանցման հաստատում կամ մերժման ծանուցում:

11. Օտարերկրյա անվանատիրոջ Հաճախորդի հետ կնքված համապատասխան պահառության պայմանագրի դադարեցման, կամ օտարերկրյա անվանատիրոջ՝ այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ վարելու թույլտվության ուժը կորցրած ճանաչելու կամ դադարելու, Պայմանագրի դադարեցման, ինչպես նաև օտարերկրյա անվանատիրոջ լուծարման դեպքում և Հաճախորդի կողմից իրեն պատկանող արժեթղթերը այլ պահառուի մոտ վերագրանցելու վերաբերյալ ցուցում չստանալու դեպքում անվանատիրոջ հաշվում հաշվառվող արժեթղթերը Դեպոզիտարիայում բացված Հաճախորդի անձնական հաշվին փոխանցելու (վերագրանցելու) համար օտարերկրյա անվանատերը Դեպոզիտարիային տալիս է սույն կանոնների 16-րդ կետով սահմանված տեղեկություններ պարունակող արժեթղթերի փոխանցման Հանձնարարական: Եթե Հաճախորդը Դեպոզիտարիայում չունի բացված գրանցված սեփականատիրոջ անձնական հաշիվ, ապա Դեպոզիտարիան առկա տեղեկությունների հիման վրա բացում է գրանցված սեփականատիրոջ հաշիվ, որը ստանում է «ինքնությունը չպարզված արժեթղթերի հաշիվ» կարգավիճակը: Տվյալ հաշվի կարգավիճակը փոփոխվում է Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով:
12. Անվանատիրոջ հաշվից արժեթղթերի փոխանցման Հաճախորդի հանձնարականը օտարերկրյա անվանատիրոջ համար հիմք է հանդիսանում Հաճախորդի արժեթղթերը փոխանցման նպատակով Դեպոզիտարիային անվանատիրոջ հաշվից արժեթղթերի փոխանցման Հանձնարարական տալու համար: Արժեթղթերի հաշվից արժեթղթերի դուրս գրման Հաճախորդի հանձնարականի հիմքով օտարերկրյա անվանատերը արժեթղթերը դուրս է գրում իր ներքին կանոններով սամանված կարգով, եթե Դեպոզիտարիայից ստացել է անվանատիրոջ հաշվից արժեթղթերի փոխանցումը հավաստող համապատասխան հաստատումը:
13. Անվանատիրոջ հաշվով Դեպոզիտարիայի կողմից կատարված գործառնության վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալու օրը օտարերկրյա անվանատերը իր մոտ վարվող արժեթղթերի հաշիվներում կատարում է Դեպոզիտարիայի կողմից անվանատիրոջ հաշվով կատարված գործառնություններից բխող համապատասխան պահառուական գործառնություններ:
14. Կորպորատիվ գործողության իրականացման դեպքում Դեպոզիտարիան այդպիսի գործողության արդյունքները օտարերկրյա անվանատիրոջ հաշվում արտացոլելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին սույն կանոններով սահմանված կարգով տեղեկացնում է օտարերկրյա անվանատիրոջը:
15. Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներով հաշվառվող արժեթղթերի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է Դեպոզիտարիայի մոտ համապատասխան գրառում կատարելու պահից:
16. Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներից արժեթղթերի փոխանցումը կատարվում է օտարերկրյա անվանատիրոջ կողմից Հանձնարարականի տրման միջոցով: Սույն կետում նշված Հանձնարարականը առնվազն պետք է ներառի

Դեպոզիտարիայում բացված արժեթղթեր փոխանցողի և ստացողի անվանատիրոջ հաշվի համարները, փոխանցվող արժեթղթերի դասը (տեսակը), քանակը, արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ նաև արժեթղթերը թողարկողի անվանումը, գործարքի ծավալը, եթե գործարքի հիմք է հանդիսանում առուվաճառքը կամ ռեպո գործարքը: Սույն կետում նշված Հանձնարարականը հիմք է հանդիսանում Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի փոխանցման գործառնության գրանցման համար: Սույն կետում սահմանված արժեթղթերի փոխանցման գործառնությունը գրանցվում կամ մերժվում է սույն կետում նշված Հանձնարարականի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**17.** Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներով հաշվառվող արժեթղթերի գրավի իրավունքը ծագում է Դեպոզիտարիայում համապատասխան արգելադրման գրառում կատարելու պահից:

**18.** Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի սեփականության իրավունքի սահմանափակումների (այդ թվում՝ գրավադրում, կալանք) դեպքում օտարերկրյա անվանատերը տալիս է Հանձնարարական, որը առնվազն պետք է ներառի Դեպոզիտարիայում բացված հաշվի համարը, արգելադրվող արժեթղթերի դասը (տեսակը), քանակը, արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ նաև արժեթղթերը թողարկողի անվանումը, սահմանափակումների վերաբերյալ (առկայության դեպքում) հետևյալ տեղեկությունները՝

**18.1.** կալանքի դեպքում կալանքի որոշումը ընդունող մարմնի անվանումը, որոշման ամսաթիվը

**18.2.** գրավադրման դեպքում գրավառուի՝ ֆիզիկական անձանց լինելու դեպքում անունը, ազգանունը, գրավառուի՝ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ անվանումը և կազմակերպատիրավական տեսակը,

**18.3.** այլ սահմանափակումների դեպքում՝ սահմանափակման էությունը և կիրառման հիմքերը,

Սույն կետում նշված Հանձնարարականը հիմք է հանդիսանում Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի արգելադրման վերաբերյալ գրառում կատարելու համար: Սույն կետում նշված արգելադրման գրառումը կատարվում է սույն կետով սահմանված Հանձնարարականի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

19. Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի արգելադրման դադարեցման համար օտարերկրյա անվանատերը տալիս է Հանձնարարական, որը առնվազն պետք է ներառի Դեպոզիտարիայում բացված հաշվի համարը, արգելադրումից դադարեցվող արժեթղթերի դասը (տեսակը), քանակը, արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ նաև արժեթղթերը թողարկողի անվանումը: Սույն կետում նշված Հանձնարարականը հիմք է հանդիսանում Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի արգելադրման դադարեցման վերաբերյալ գրառում կատարելու համար: Սույն կետում նշված արգելադրման դադարեցման գրառումը կատարվում է սույն կետով սահմանված հանձնարարականի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

#### **Գլուխ 4. Տեղեկատվության համադրումը**

##### **Հոդված 4. Արժեթղթերի հաշիվներում հաշվառվող արժեթղթերի մնացորդների և այլ տեղեկատվության համադրման և ճշգրտման կարգը և ժամկետները**

1. Օտարերկրյա անվանատերը արժեթղթերի հաշիվներում հաշվառվող արժեթղթերի մնացորդների և այլ տեղեկատվության համադրման և ճշգրտման նպատակով իրավունք ունի Դեպոզիտարիային ներկայացնել Հարցում: Դեպոզիտարիան հարցման ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է օտարերկրյա անվանատիրոջը ներկայացնել անվանատիրոջ հաշվի մնացորդի վերաբերյալ տեղեկությունները՝ Իրավասու ցանցի ՀՏ 999 հաղորդագրության միջոցով կամ թղթային տեղեկանքի միջոցով:
2. Դեպոզիտարիայի կողմից տրամադրված տեղեկություններում նշված տվյալների և օտարերկրյա անվանատիրոջ մոտ վարվող հաշիվների մնացորդների համադրման արդյունքում ստացված անհամապատասխանության դեպքում օտարերկրյա անվանատերը Դեպոզիտարիային տալիս է նախորդ Հարցման պահից կատարված գործառնությունների վերաբերյալ Հարցում:
3. Դեպոզիտարիան սույն հոդվածի 2-րդ կետում նշված գործառնությունների վերաբերյալ Հարցման ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրյա անվանատիրոջ ներկայացնում գործառնությունների կատարման վերաբերյալ տեղեկությունները սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:
4. Անհամապատասխանության բացահայտման դեպքում օտարերկրյա անվանատերը կատարում է համապատասխան ճշգրտումներ կամ Իրավասու ցանցի ՀՏ 999 հաղորդագրության կամ թղթային տեղեկանքի միջոցով Դեպոզիտարիային է ներկայացնում տեղեկությունների ճշգրտում, որում նշվում է ճշգրտման ենթակա տեղեկությունները՝ համապատասխան հիմնավորումներով (եթե անհամապատասխանությունը պայմանավորված է անվանատիրոջ հաշվում առկա

տեղեկությունների անհամապատասխանությամբ):

## **Գլուխ 5. Իրավունքներ և պարտականություններ**

### **Հոդված 5. Դեպոզիտարիայի իրավունքներն ու պարտականությունները**

1. Դեպոզիտարիան իրավունք ունի.
  - 1.1. մերժել օտարերկրյա անվանատիրոջ կողմից ներկայացված Հանձնարարականների, Հարցումների կատարումը, եթե դրանք չեն համապատասխանում Օրենքի, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի և սույն կանոնների պահանջներին:
  - 1.2. մերժել Պայմանագրի կնքումը, իսկ արդեն իսկ կնքված Պայմանագրի առկայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում լուծել այն՝ օտարերկրյա անվանատիրոջ կողմից սույն կանոններով սահմանված տեղեկությունների չտրամադրման դեպքում:
2. Դեպոզիտարիան պարտավոր է.
  - 2.1. Սույն կանոնների 2-րդ հոդվածի 5.2. և 5.3. կետերով սահմանված տեղեկությունները ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում դրանք փոխանցել արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը վարող անձին, եթե ռեեստր վարող անձը Դեպոզիտարիայից տարբեր մասնագիտացված անձ է: Սույն կետով սահմանված տեղեկությունների փոխանցման նպատակով Դեպոզիտարիան անվանատիրոջ հաշիվ է բացում սույն կետում նշված ռեեստր վարող անձի մոտ:
  - 2.2. կատարել օտարերկրյա անվանատիրոջ կողմից տրված Հանձնարարականները, Հարցումները՝ Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով, Պայմանագրով և սույն կանոններով սահմանված կարգով և ժամկետներում,
  - 2.3. Օտարերկրյա անվանատիրոջ կողմից տրված Հանձնարարականների, Հարցումների կատարման կամ դրանց մերժման դեպքում օտարերկրյա անվանատիրոջը ծանուցել սույն կանոններով սահմանված կարգով,

### **Հոդված 6. Օտարերկրյա անվանատիրոջ իրավունքներն ու պարտականությունները**

1. Օտարերկրյա անվանատերը իրավունք ունի.
  - 1.1. իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Դեպոզիտարիայի սույն կանոններով սահմանված՝ արժեթղթերի անվանատիրոջ լիազորությունները, այդ թվում՝ տալ Հանձնարարականներ և Հարցումներ:
2. Օտարերկրյա անվանատերը պարտավոր է.

- 2.1. Դեպոզիտարիայի կողմից տրված Հանձնարարականների, գործառնությունների գրանցման հաստատումների, այլ տեղեկությունների կամ փաստաթղթերի հիման վրա կատարել համապատասխան պահառուական գործառնություններ,
- 2.2. արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար Դեպոզիտարիայի կողմից ստացված տեղեկությունները փոխանցել Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդից՝ Դեպոզիտարիային,
- 2.3. իր մոտ հաշվառվող արժեթղթերի հաշիվներում փոփոխությունների գրանցման դեպքում այդ փոփոխությունների վերաբերյալ Դեպոզիտարիային տալ սույն կանոններով սահմանված համապատասխան Հանձնարարական կամ Հարցում սույն կանոններով սահմանված կարգով և ժամկետներում,
- 2.4. կատարել Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով վճարումներ վերջինիս կողմից իրեն մատուցված ծառայությունների դիմաց:
- 2.5. արժեթղթերի սեփականատերերին տեղյակ պահել արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման կարգի վերաբերյալ,
- 2.6. Դեպոզիտարիային տեղեկացնել Հաճախորդների արժեթղթերի ռեեստր վարող անձի մասին սույն կանոնների 2-րդ հոդվածի 5.2. և 5.3. կետերով սահմանված տեղեկությունների փոխանցման նպատակով:
- 2.7. Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով, Պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ պարտավորություններ:

## **Գլուխ 6. Անցումային դրույթներ**

### **Հոդված 7. Սույն կանոնների ուժի մեջ մտնելը**

1. Սույն կանոնները, դրանցում փոփոխությունները և/կամ լրացումները հաստատվում են Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցման պահից, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոններով:

Հաստատված է

«Հայաստանի կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ  
Դիտորդ խորհրդի 26.07.2011թ որոշմամբ

Վահան Ստեփանյան

ք.Երևան